

ղում կատարած ուսումնասիրությունները, որոնք թափանցել են նրա ստեղծագործությունների մեջ, համարում են յայտնություններ, որոնք արեւմտաեւրոպական երաժշտության աշխարհահռչակ ներկայացուցիչներին իսկ «չատ բան ուսուցանել կարող են», «արդի գիտությունը անգլիան ծառայություններ կարող են մատուցել»:

Կոմիտասի ստեղծագործությունն ու գիտական գործունեությունը համանման դրահաստակալի է արժանացել նաեւ Սէն-Սանսի, Օպերի, Ռավելի, Չերեպինի, Գնեսինի, Հարտմանի եւ շատ այլ նշանաւոր երաժիշտների կողմից:

Կոմիտասեան վսեմ արուեստի բարերար ներգործությունը սկսում է դադարաւորների, երաժշտագիտական մտքի վրայ ունեցած իր ներգործությունից, որ այնուհետեւ պիտի տարածուէր նաեւ բուն ըստեղծագործութեան մէջ, անշուշտ իրբեւսկզբունք, եւ ոչ իրբեւ ընդօրինակութիւն:

Շարժել միտքը, սնունդ տալ նոր դադարներին մեծագոյն արժանիք է, մի

բան, որ կապում է Կոմիտասի անունը, նրա ստեղծագործական գործունեութեան հետ:

Այսպէս, Կոմիտասն իր մեծ ու խոր երաժշտական գործունեութեամբ ոչ միայն հանգիստացաւ հայ երաժշտական դպրոցի հիմնադիրն ու մեծագոյն ներկայացուցիչը, այլեւ գրանով դարձաւ համամարդկային երաժշտական մշակոյթի խոշոր դէմքերից մէկը, որն առաւել ամրապնդուած կը լինէր, եթէ այնքան անողորմ ու անժամանակ չհասնէր եղեռնական վախճանը...

Ահա թէ ո՛րն է Կոմիտասի մեծությունը, Կոմիտասի, որ եկաւ հայ ժողովրդի կեանքի ու հոգեւոր մշակոյթի բազմադարեան պատմութեան խորքերից ու վեր խոյացաւ երեսը դարձրած նրա դարդացման նոր ու հեռաւոր ուղիները:

ՅԻՅԻԼԻԱ ԲՐՈՒՏԵԱՆ

Արուեստի վաստակաւոր գործիչ
(Երեւան)

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

(ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

1969ին՝ Կոմիտաս Վարդապետի, Յովհաննէս Թումանեանի, Լեւոն Շանթի եւ Երուանդ Օտեանի ծննդեան հարիւրամեակները կատարուեցան:

Կոմիտաս Վարդապետ կը վայելէ բոլոր հայութեան անվերապահ յարգանքը: Յովհաննէս Թումանեան «Ամենայն Հայոց Բանաստեղծը», Հայաստանի եւ ըստփիւռքի մէջ ունի հիացողներու անթիւ բաղմունքիւն:

Լեւոն Շանթի յորելեանին հանդէսներն ալ անշուշտ՝ ստեղծեցին ողբերգութիւն մը իր համակիրներու կողմէն:

Ընդհակառակն, Երուանդ Օտեանի անունին շուրջ կը պակսի կարծիքներու միութիւն: Ոմանք կը կոչեն զինք Հայոց ամէնէն մեծ երգիծաբանը. աւելի շատեր՝ Յ. Պարոնեանի հետ կ'անուանեն Հայոց երկու մեծ երգիծաբանները: Կան, սակայն, ուրիշներ, որոնք իր մէջ աննկարագիր մարդ մը կը տեսնեն եւ կը համարձակին հաւաստել թէ «Պարոնեանի անհամեմատ քրակին դէմ՝ Օտեան առաւելապէս քանակ ունի» (ՄԻՆԱՍ ԹԷՕԼԷՕԼԵԱՆ, Դար մը գրականութիւն, Գահիրէ, 1955, էջ 526):

Կը համարինք Երուանդ Օտեանի յորելեանը լաւագոյն կերպով կատարել, եթէ ընձեռենք ընթերցող հասարակութեան՝ մեծ երգիծաբանի բարդ անհատականութիւնը եւ գործը ճանչնալու կարելիութիւնը:

Յաջորդաբար պիտի նկատենք՝

Ա.՝ Սփիւռքի հայութեան կեցումները Երուանդ Օտեանի հանդէպ:

Բ.՝ Երուանդ Օտեան ուսումնասիրուած Սովետական Հայաստանի մէջ:

Գ.՝ Կենսագրութիւնը:

Դ.՝ Մարդը եւ հասարակաց գործիչը:

Ե.՝ Գլխաւոր գործերը:

Զ.՝ Գրագէտը:

Է.՝ Գործերուն ցանկը:

Ի՞նչ է ՄԵՐ ԴԻՏԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

Ձեռք յաւակնիր Երուանդ Օտեանի մասին վերջնական ուսումնասիրութիւն մը կատարել: Երբ իր գործերուն ցանկը տանք, պիտի տեսնուի որ արտաքոյ կարգի բեղուն հեղինակի մը դիմաց կը դրանուինք: Ունի բաղմունքի տառնակներու հասնող վէպեր, վիպակներ, պատմուածքներ, երգիծական հատորներ, յուշագրութիւններ, ուսումնասիրութիւններ, թատրերգութիւններ, որոնց միայն մէկ համեստ մասը լոյս տեսած է առանձին հատորով, ընդհանրապէս անխնամ ու մերթ պակասաւոր տպագրութեամբ:

Եթէ ուզենք Օտեանի իրական դիմագիծը վերակազմել թէ՛ իր մարդ, թէ՛ իր դարպէտ, հարկ է 1890էն 1925 տարիներու ընթացքին հրատարակած հազարաւոր քրոնիկներն ու տոմսերն ալ աչքի առնել ունենալ:

Ան հրատարակած է նաեւ շուրջ 15 անձնական թերթեր, որոնցմէ ոմանք նոյնպէս սեփական դիմագիծ ունին:

Պէտք է մոռնալ նաեւ իր տասնեակ հատորներու հասնող թարգմանութիւնները:

իր համակրութեան աշխարհին մէջ, ըսենք իրարու, բարեկամներ, թէ բարի, իմաստուն ու կտրիճ մարդ մը եղաւ ան: Կտրիճ ալ, այո՛: Ան երբեք չգանգատեցաւ, չդառնացաւ ո՛չ կեանքին եւ ո՛չ մահուան դէմ: Այս վերջին հիւանդութեան ընթացքին՝ որ վերջապէս նուաճեց զինքը, տրտունջի բառ մը չլսեցինք իր բերնէն»...:

3) ՄԻՔԱՅԷԼ Ս. ԿԻՒՐՃԵԱՆ, Իր յիշատակին, անդ, էջ 459-62:

«... կեցնաւրալս, - իրեն համար յատկապէս շինուած բառ մը՝ կարծէք:...

Չէի յիշեր երբեք զինքը մտահոգիչ ընելու աստիճան հիւանդ տեսած ըլլալ. եւ ինք՝ տեսակ մը հպարտութեամբ՝ անցեալ տարի գիշեր մը, որ հիւր էր մեզի ի Ռամբլէ, պատմեց թէ ինչպէս կուրծք տուեր էր աքսորի կեանքին անհնարին տաժաններուն ու չարչարանքներուն, առանց օր մը անկողին իյնալու:

... մէկ քանի օր անցունել այդ աննման խօսողին, պատմողին, ծիծաղեցնողին հետ, ի՞նչ տօն...

... Կա՞յ մեր մէջ Օտեանէն աւելի ճանչցուած, սիրուած, ժողովրդակամացած հեղինակ մը, բառին լաւագոյն իմաստովը, քանի որ իր անհամար հիացողները կը պատկանին մեր ժողովուրդին բոլոր խաւերուն անխորի: Թերեւս ընթերցողէն մինչեւ փափկաճաշակ գրասէրը եւ մինչեւ դժուարահաճ գրագէտը, ամէն ոք այսօր կը զգայ թէ ինչ անփոխաբինելի կորուստ մըն է որ կ'ընէ մեր գրականութիւնը Օտեանի անհետացումովը: Անշուշտ Օտեանի փառքն ապահովուած, իր անմահութիւնը - ցորքան ապրին հայ ազգն ու լեզուն - երաշխաւորուած է այն բազմաթիւ երկերովն ու մէկէ աւելի գլուխ-գործոցներովը զորս կը ձգէ, իշխանական ժառանգութիւն, մեր աղքատիկ գրականութեան... Սակայն կարելի՞ է դառնօրէն չաւաղել որ մահը մենէ խլած ըլլայ այս եղական գրագէտը, երբ ան տակաւին կարող էր երկար տարիներ ար-

տադրել, մեր ամենամեծ հաճոյքին եւ հայկական դպրութեանց օգտին ու փառքին համար...»:

4) ՕՇԱԿԱՆ, Նիշեք, անդ, էջ 462-466:

«... Բայց ինչ որ արդար ու խստապահանջ մաշակ մը կրնայ գատել այդ մեծազանգուած խառնուրդէն, լիուրի կը բաւէ անոր հեղինակը աղատելու ժամանակին քմահաճոյքէն ու աւերներէն, յանձնելու համար անոր անունը ազգային փառքերու աւանդարանին: Օտեան ժամանակակից գրականութեան մեծ ԽՆԴԱՅՈՂՆ է, ու բոլոր խնդացողներուն նման կը թաղուի... առանց յորեկանի:

Նկարագրելը իր ժպիտին: - Ահա ինչ որ դժուար է ճշտել առաջին ակնարկով: Այնքան բազմաձեւ եւ արտայայտութիւնները անոր դէմքին: Բայց պէտք է աւելցնել անմիջապէս որ դէմքի բոլոր այդ խաղերը ողողուած են հեգնութեամբ յըստակ ճառագայթումով մը: Ու ասիկա չահեկան ու բացառիկ երեւոյթ է, մանաւանդ իր շրջանին համար, երբ մեր գրականութեան խորագէտ հաւատաւոր՝ սասերտաղալ լրջութիւն մը կը զգենու իրապաշտ դաւանանքին հետ: Ի՞նչպէս եւ ինչո՞ւ Երուանդ Օտեան այդ սերունդին մէջն ու հետը:

Անոր մօտ ոչ մէկ տիրական համոզում, որ, սխալ կամ ուղիղ, առաջնորդէր անոր մտքին նաւը մեր նորագոյն ճակատագրին այնքան դժուար ջուրերուն վրայէն: Անոր մէջ՝ ոչ մէկ պատրանք՝ որ մեզի կը կտակուի մեր մանկութենէն, միջավայրէն, ու կ'ընկերանայ մեր բոլոր փորձանքներուն՝ զիւրաբեկ լաստեր նետելու համար մեր ոտքերուն, երբ անոնք դէպքերու հեղեղէն խորտակուելու կը հակին: Անոր մէջ՝ ոչ մէկ սլացք, խանդավառութիւն, յիմարութիւն՝ որով յատկանշուեցաւ Արփիարի սերունդը: Բայց անիկա հետն է նորէն ամէնէն ապերասան սերունդին: Իր տաղանդին լիութիւնը կը զուգարկի 1910ի փորձանոտ եռուղեւին:

Քանի մը սերունդի ծառայելու այս ընդունակութիւնը - ըստ ոմանց՝ տկարութիւնը - անոր հեղեղութիւնը կ'աղօտէ անշուշտ, ընելու համար աւելի ընդհանուր ու անոյշ: Հոս է թերեւս դադանիքը իր թշնամի չունենալուն: Բարքերու խուկեղանները կրնան սրտնեղիլ իր պատկերներուն դէմ: Գրականութեան պատմագիրը պիտի խոնարհի պայծառ նկարներուն դիմաց՝ որոնք իր վրձինէն դուրս ելան:

Օտեանի հեղեղութիւնը կը տարածուի ժամանակակից իրականութեան երկու մեծ երեսներուն վրայ: Առնցմէ մէկը, մեր - այսպէս յորջորջուած - մտաւորամէկ կանութիւնը անոր գրիչին հայթայթած է Ընկերամէկ յաջողակ ստեղծումները: Ընկերափառութիւնն է Ազգային երեսփոխանները Օտեանի գործին ամէնէն ցայտուն յիշատակարանները մնալու սահմանուած են: Միւսը, մեր քաղաքին ու միջակ դասավարդը, առիթներ միայն տուած է անոր՝ կարգը, առիթներ միայն տուած է անոր՝ կարգը: Հետաքրքրական է որ առաջին դամիսկանը այնքան վճռական պիտակներու ու յատկանշիչութիւնը ենթարկուի գրադէտին նուաճումին որ գրեթէ կատարեալ է՝ մեր գրականութեան տարողութեանը տեսակէտէն:...

Օտեան դասական գրագէտ մըն է եւ ատով մեծ գրագէտ: Դէպքերը տալու իր եղանակը, անկախաբար հեղեղութեան ակնոցէն, ամէնէն հաստատուն առաքինութիւնն է անոր... տաղանդին: Պարզ, ուղիղ, զակի, գրեթէ առանց գրականութեան, անոր ոճը յարմարաւորն գործիքն է՝ տըրտունջը յարմարաւորն գործիքն է, որ այդ կազմին յիշատակարան մըն է, որ այդ պոլտոր շրջանին հաւատարիմ հայելին կը մնայ:

Իր վէպերը: - Նոյն առաքինութիւնը կը պաշտպանեն դարձեալ իր պատմութիւնները՝ որոնք օրուան կեանքին պարկեշտ դրամսթոգիւններն են: Մի՞ փրկուէք հիւսք ու յօրինուածք, հոգեբանու-

թիւն կամ բարքեր տալու հեղեղ մտահոգութիւն անոնց մէջ: Արագ տողանցք մը մեր արմկահարած մարդերուն, իրենց թերութիւններուն ամբողջ տոսիէներովը՝ վիճակներ որոնք շատ մօտ ըլլան օրուան իրականութեան. միջոցաւ մը՝ ուր քանի մը հոսանքներ, դարձեալ զանգուածէն հանուած, պտտին ու գունաւորուին անմիջական, պարզ կիրքերով: Անոնց արժէքը: - Անշուշտ, քանի որ առ նուազն անոր ակնոցը հեղեղութեան ծիրանի մը նետած է այդ բոլոր շարժումներուն վրայ:

Եղական է իր համեստութիւնը մեր գրողներուն անհուն փառամոլութեանց մէջ: Ցաւ չունեցա՛ւ, երբ գրականութեան պատմութիւն գրողներ հազիւ տող մը չընորհեցին իր անունին: Ցաւ չունէր դարձեալ իր մոռացումէն, ինքզինք ազատած տեսնելով ուսումնասիրութիւններուն կատակերգական սնտիքէն: - Գրելը անոր մօտ հաւասար մնաց խմելուն: Անիկա անկարելի հրաշքը իրագործած էր, պատրանքներուն ամէնէն ահաւորին՝ գրական պատրանքին գլուխը ճգմած ըլլալու: Հոգ ուրիշ անուն չունիմ իր մօտ գնելու»:

5) ԹԷՈԴԻԿ, Հայ մոլորակին, անդ, էջ 468-471:

... «96ին, 915ին ու 22ին երկուս աքսորական - վերջինը միայն կամաւոր - հակառակ արտալաճիկ կենցաղի դիպուածաւար տաղտապներուն ու խարխալներուն՝ ապրեցար լոկ քու անձեր մտքիդ ու սուր գրչիդ շնորհիւ: Չափեցիր Հայտարափաշայէն մինչեւ արեւակէզ հունը Եփրատի, եւ այդ մենիկ անվերջ գողգոթայիդ՝ աչքդ իբր փոստի պտուղիդ ամէնուրեք, եղբայրանալով ահաւոր թշուառութեան հետ, բայց բարոյական կորովի ձեռքէ չհանելով երբեք: Դուն էիր որ դարձիդ՝ վերապրող յորջորջում ծանակեցիր, ու կրկնեցիր իրաւամբ մարդարէին խօսքը. «Ես այն մարդն եմ որ տառապանքը տեսայ», նախօրինակը տալով նաեւ որք որդեգրելու:

Ողջութեանդ մէկ անգամ միայն լացուցիր զմեզ, երբ փղշտական անապատներէն հայրենազարծութեանդ վաղորդայնին՝ սկսար Ողջոյն ձեզ կողկողել ժամանակի մէջ: Վիզդոս Մարկը կարծես քեզի համար դրած ըլլար սա խոհը. «Տառապանքը լողանքն է զարթուցիչ. մեծ հոգի մը ջլապինդ դուրս կու գայ այդ լողանքէն»: Ու երէկի կտուտէն յանկարծ սթափած՝ սկսար ծիծաղ սփռել նորէն վերապրող սղաւոր Հայութեան վրայ:

... Այրի մօրկանդ հանգէպ տածեցիր ակնածանք եւ աղապատանք միայն: Նախապատերազմեան շրջանին՝ երբ Բերադրիկէն էինք իրարու, երբեմն կը պատահէր որ մեզի գիշերէիր, ուշը մնալովդ՝ վիշտ չպատճառելու համար անոր...: Այդ մտերմիկ օրերուն, դուն «ինչ անըպառ աղբիւր արեւ չտեսած» ծաղրաշարժ զրոյցներու, որոնցմէ «արծաթազուլու երենոսէ դաւադանք» ոչ ես կրնամ մոռնալ, ոչ ալ «Եղիպոսս՝ Ֆէլլահներու ողջ ողջ լորմարդ որսալը» Գօլանճեան:

Կը յիշեմ, մէկ օր միայն լուրջ մնացիր, դոնէ իմ ներկայութեանս, երբ Վերջին Լուրի խմբագրատունը՝ վար դրիր զրիչդ, ձեռքս սեղմեցիր եւ համբուրեցիր զիս արցունքներու մէջէն, «Եթէ դուն կինդ կորուսիր, ես ալ իմ քոյրս» հծծելով: Ու քանի մը ամիս խելօք կեցար իմ մօտս, երբ նոյն խմբագրատան մէջ՝ քաջքող մարդու սլաքներու թիրախ դործածեցիր շարունակ Շամտանը, Գօլանը, Արմէնն ու Մրմրը...:

Սեղմարանութիւն (concision) եւ անսեթեւեթ ոճ յատկանիչերդ մնացին: Տաղանդդ կը բնորոշուէր սրամտութեամբ մը որ ոչ Պարոնեանի խոշոր երգիծանքն էր, եւ ոչ ալ մառախլապատ հիւսիսը մեր գաւառիկ վարպետներէն Թլկատինցիի, այլ նուրբ ու փայլուն վերվ մը՝ որ աջող տիպարներու մէջ կը շփոթուէր առօրեայ իրականութեան հետ, երբ զայն անցնէր ուղեք հեղնութեան պրիսմակի մը ընդմէջէն:

Ինքնահոս հանաք ունէր միայն թանաքը դրէիդ - է զի փետուր, է զի ոսկի: Վարպետութիւնդ հոն կը կայանար արդէն, որ օր մը զօրանց հանաք չգարծուցիր, այնու զի զիտցար ծիծաղին մեղքն ալ խառնել յորդ հեղնաբանութեանդ (ironie), թուտ ձաղիդ (moquerie) ու երբեմն սոկրատեան կծու այսպանքիդ (sarcasme):

* * *

Այս գրութիւններու համաձայն՝ Երուանդ Օտեանի դէմքը իբր գրագէտի եւ մարդու, այսպէս կարելի է վերակազմել:

Իբր գրագէտ ընդհանուր գիծերու մէջ

Մեր ամէնէն ժողովրդական հեղինակն է: Իր անհամար հիացողները կը պատկանին անխորի մեր ժողովրդի բոլոր խաւերուն (Կիւրճեան): Իր աչքը իբր բոտաֆ դործածեց ամէնուրեք, նաեւ Աղդային ժողովին մէջ (յիշենք Մեր Երեսփոխանները, Թէոդիկ):

Եթէ իր արժէքաւոր երկերը հաւաքուին արդար ու խտապահանջ ճաշակով, իրաւունք պիտի տան իրեն մտնելու «աղդային փառքերու աւանդարանին մէջ» (Օշական): Նոյն բանը կ'ըսէ Կիւրճեան հետեւեալ կերպով. «Իր բաղմամբ երկերը եւ մէկէ աւելի դուրս դործոցները՝ կ'ապահովեն իր փառքը»:

Իբր գրելու վարպետ

Զուտարիւն զրազէտ է, մինչ Պարոնեան երկրորդական գրող մը միայն (Բաշալեան):

Իր ոճը ճոռմութենէ եւ սեթեւեթէ զերծ, է դասական, վճիտ, պարզ, արժէքաւոր արձակը (Բաշալեան եւ մասամբ Թէոդիկ):

Մեծ դասական զրազէտ է: Պարզ, ուղղակի ոճը՝ յարմարագոյն է ընդհանուր, յատկանշական գիծեր հաւաքելու եւ հաշիւացնելու, ինչպէս ըրած է Տաւնեքիւ:

տարի Պոլսէն դուրս գիրքին մէջ (Օշական):

Ունի լեզուական բնատուր ձիրք, «բառերուն իրական արժէքին եւ անոնց տեղադրման զիտութիւնը, արտայայտութեան կարողութիւնը, պատմելու եւ խօսեցնել տալու ճարտարութիւնը (Բաշալեան):

Կարելի է դադարաւորակից չըլլալ, բայց պատմադիրը պիտի խոնարհի իր պայծառ նկարներուն դիմաց: Մտաւորականութիւնը վճռական յատկանիչներով եւ գրեթէ նրկատարեալ պատմութիւն վրայ առած է Ընկերականութիւնը եւ Մեր Երեսփոխանները զրութիւններու մէջ: Միւս դասական գրողները՝ ուրուագծած է միայն (Օշական):

Իբր երգիծաբան

Հանդարտ ու թեթեւ թուիլով վեր կը բարձրանայ իր թշնամիներուն եւ անձին բարձրանայ իր թշնամիներուն եւ անձին ալ վրայ, դիտելու համար: Իր հեղնուալ թեթեւ երբեմն կը ծեծէ զանոնք, իր երգիծանքի փրփուրը երբեմն կը պայթի անոնց վրայ: Բայց առեւտրութիւն կամ ոխ երբեք չպահեց մարդոց դէմ, բացի իր ազգի թշնամիներէն (Թէոդիկ):

Ժպտեցաւ ամէնուն վրայ եւ ամէն տեղ, քիչ մը արհամարհոտ, բայց այնքան չար՝ որքան պէտք էր միայն: Իր նպատակին հասնելու համար անոր հեղնութիւնը պէտք էր չունէր պոռթկումներու կամ խարաղանի շաչիւններու (Բաշալեան):

Գիտցաւ յորդ հեղնութիւնը, թինդ ձաղը եւ սոկրատեան այսպանքը անուշցնել եւ խուսիլ ջլթիկ քրքիջէն (Թէոդիկ):

Քանի մը սերունդի ծառայելու ընդունակութիւնը, իր հեղնութիւնը աւելի ընդհանուր եւ անոյշ կը դարձնէ (Օշական):

Իր սրամտութեան, հեղնանքի եւ երգիծանքի անդուգական վարպետ, բայց կը խորշր բառախաղէ (Թէոդիկ):

Պարոնեանի խոշոր երգիծանքը, Թլկատինցիի մառախլապատ հիւսիսը չէ ի-

րը, այլ նուրբ ու փայլուն վերվ մը, որ յաջող տիպարներու մէջ կը շփոթուի առօրեայ իրականութեան հետ (Թէոդիկ):

Իբր քրոնիկագիր, վիպագիր եւ քատերագիր

Քրոնիկն իր ամէն ձեւերով, իրմէ աւելի մեծ վարպետ չունեցաւ (Թէոդիկ):

Նաեւ վէպն ու թատերգութիւնը պարտական են իրեն (Թէոդիկ):

Մեծ գրագէտ է նաեւ վէպերուն մէջ, բայց հիւսք, յօրինուածք, հոգեբանութիւն չփնտռեց: Կեանքի դանապան երեւոյթներուն լուսանկարներն են, հեղնութեան ծիրանի դօտիով շղարշուած (Օշական):

Իբր բացառիկ յատկութիւններու տէր

Հայ միտքին գերազանցութիւնն էր ան (Թէոդիկ):

Իբր արտադրութիւն եւ յիշողութիւն հաւասարը չունի (Թէոդիկ):

Իրապաշտ դաւանանքի խորապէս հաւատացող սերունդին մէջ, բացառիկ զրազէտ մըն է, իր հեղնութեան յստակ ճառագայթումով եւ բաղմամբ զիմադեւումով: Ու թէեւ կ'ապրի Արփիարի եւ անոր ապերաստան սերունդին հետ, բայց կը պահէ իր անկախութիւնը, չունենալով մանկութենէ կտակուած ուղեգիր, ոչ ալ աւելի ուշ իւրացուած քաղաքա-ընկերային համոզում (Օշական):

Իբր մարդ

Քանի մը սերունդի ծառայելու ընդունակութիւնը, ըստ ոմանց նկարագրի տրեկարութիւն է: Օտեան սակայն անկարելի հրաշք մը իրագործած է, զրական պատրանքին (ինքզինք մեծ գրագէտ նկատելու ձգտումին) զլուխը ձգած է (Օշական):

Պէտք է ըսել որ, իբր մարդ ալ բացառիկ տիպար մըն է. «Մեր յաւիտենապէս տրտնջացող, թղկացող, լացող, դանապատիւն»:

տաւոր... դիմացինը յանցաւոր բռնող ցեղին մէջ» գիտցաւ իր անձնական ցաւը պարտկել եւ ստոյիկեանի անայլայլ աչքերով մօտենալ ամէն բանի կամ պատահարի (Բաշալեան)։ Սուտը, դձուճն ու քէնը անծանօթ էին իրեն (Թէոդիկ)։

Բարոյական կորովը նոյնիսկ աքսորի ժամանակ չկորսնցուց (Թէոդիկ)։ Կտրիճ էր կեանքի բոլոր պատահարներուն եւ նոյնիսկ մահուան դիմաց (Թէոդիկ)։

Նաեւ բարի էր եւ իմաստուն (Թէոդիկ)։ Եւ մարդասէր՝ նաեւ որբ որդեգրելու օրինակը տալով (Թէոդիկ)։

Ընկերութեան մէջ՝ կենսութիւն էր, այս բառը կարծես յատկապէս իրեն համար շինուած ըլլար (Կիւրճեան)։ Մէկ քանի օր անցընել այդ աննման խօսողին ծիծաղեցնողին հետ, ի՞նչ տօն էր (Կիւրճեան)։

Անսպառ աղբիւր էր «արեւ չտեսած» ծաղրաշարժ գրոյցներու, բայց միւս կողմէն կատարեալ կենցաղագէտ էր, որ գիտէր կարեկցել ուրիշին գծրախտութեան (Թէոդիկ)։

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Այս մէջբերումներէն կարելի է որոշ գաղափար մը կազմել Երուանդ Օտեանի մասին՝ իբր գրագէտ։

Սակայն մինչ ընդհանրապէս դասական գրագէտի եւ երգիծաբանի յատկանիշները բաւականաչափ շեշտուած են, քրոնիկադերի, վիպագիրի, թատերագիրի ու յուշագիրի արժանիքները միայն հարեւանցի կը շօշափուին։

Բնականաբար պարագայական դըրուածքներէ աւելի կարելի չէր սպասել։

Իբր մարդ՝ շատ կը դովուի։ Իր բարեկամները եւ ան ալ անոր դադաղին դիմաց, չէին կրնար Օտեանի թերութիւններուն վրայ ծանրանալ։

Սակայն յիշուած բարեմասնութիւնները իրական են, եւ կը բնորոշեն Օտեանի մէջ բազմաթիւ աղնիւ կողմեր։

Վերոյիշեալ գրութիւններէն, հետեւաբար, այն տպաւորութիւնը կ'ունենանք՝ որ Օտեան, ըլլա՛յ գրագէտ, ըլլա՛յ իբր մարդ, բազմաթիւ բարեմասնութիւններով օժտուած էր։

(Շար. 1)

Հ. ՅՈՒՍԵԿ ՊՈՒՇԼԻԿԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ԱՌՋԵԻ

Մարդկային Պատմութեան ամէնէն կարեւոր եւ լուսաւոր էջը կը պատկանի անտարակոյս Քրիստոսի։

Յիսուսի մասին նուիրուած են հազարաւոր հատորներ, որոնցմով կարելի է հսկայ գրադարան մը կազմել։

Մարդկութեան ծոցէն ելած են հաւաքներ, հերոսներ, սուրբեր։ Բայց բո՞ւստի այս դէմքերու մէջէն, ամէնէն վեհ, լոր այս դէմքերու մէջէն, ամէնէն աւելի փայլուն, ամէնէն աւելի զգալի էր քսան դարերու ընդմէջէն, արեգակի պայծառութեամբ կը շողայ տակաւին, հոգեկան կեանք եւ սնունդ բաշխելով աշխարհի։

Քրիստոս՝ մարդկութեան տուաւ կրօնք մը, որ սահմանուած էր կերպարանափոխութեամբ։ Այսինքն պատմութեան ճակատագիրը։ Այնքան հիմնեց իւրաքանչիւր թագաւորութիւն մը, որուն սահմանները պիտի ըլլային աշխարհիս չորս ծագերը։

Կը հետաքրքրուինք մեծ մարդոց կեանքով, կը սորվինք երկրաւոր թագաւորութիւններու պատմութիւնը։ Կ'արժէ նաեւ թիւններու պատմութիւնը։ Քրիստոսի կեանքով եւ ուսումնասիրել Անոր վարդապետութիւնը։

* * *

Աւետարաններու մէջ կը պատմուի, թէ մեզմէ երկու հազար տարիներ առաջ, Հռոմայեցիներու Օգոստոս կայսրին ժամանակ, Մանուկ մը կը ծնանի՝ Պաղես-

տինի մէկ աննշան դի դի մը մէջ։ Հրաշապատում դէպքերով լի է Անոր ամբողջ կեանքը։

Անկա դեռ նոր լոյս աշխարհ եկած՝ հրեշտակներ կ'երեւին հովիւներուն, եւ աստղի մը առաջնորդութեամբ՝ հեռաւոր երկիրներէ մոգեր կու գան երկրպագելու Անոր, որուն անունը Յիսուս է։

Երեսուն տարի անծանօթ եւ անաղմուկ կեանք մը անցընելէ ետք, Յիսուս յանկարծ կ'երեւի հրապարակի վրայ, աշակերտներ կը հաւաքէ իր շուրջ, անթիւ հրաշքներ կը դործէ, հիւանդներ, խեղանդամներ, զիւահարներ կը բուժէ, կը հրամայէ ծովին ու հովին, Ինքզինքը կը յայտարարէ Աստուծոյ Որդի, որ երկինքէն եկած է մարդկութիւնը՝ սատանայի տիրապետութենէն փրկելու եւ երկինք առաջնորդելու համար։

Անկա պարզ՝ բայց հոյակապ քարոզներ կը խօսի, թարմ շունչով ողողուած, գեղեցիկ խոստումներով ընդելուզուած նոր վարդապետութիւն մը կը սորվեցնէ եւ կը հիմնէ Նոր Եկեղեցի։

Երուսաղէմի մէջ, Ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն մը կ'ընէ Իրեն, բայց քանի մը օր ետք, հրեայ կրօնապետները ձերբակալել կու տան զինքը, եւ իբր մօլորեցուցիչ, կը յանձնեն Պիղատոսին, որու թոյլտուութեամբ՝ անարգանքի խաչին վրայ կը սպաննեն զԱյն։

Թաղումէն երեք օր ետք, սակայն, յա-